

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՎՏԱՐԱՆԴԻՆ
ԱՌ՝ ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ազատ Մասեաց դուստր, ընդէ՞ր
դէմքըդ մենէ ես ծածկեր,
վտարանդի հայերու
սիրտի յոյժ՝ յո՛յժ են կարօտցեր,
աչքով զքեզ տեսնելու
հոգւով ի քեզ փարելու:

Ի զուր դրացին մեր ոսոխ
կարծեց առնուլ իւր շար ոխ,
երբոր օտար երկրի մէջ
ջանաց առնել ոտնակոխ
քու փառքդ որ ՚ի մեզ անվերջ,
քու սէրդ որ ՚ի մեզ անշէջ:

Այո՛, քաղաքք մեր աճիւն,
դաշտք մեր յարիւն թաթաւիւն
բայց ոսոխին ի՞նչ օգուտ,
քանի հայ սիրտըն զգայուն.
պահէ զանունդ անկորուստ,
թէ չքաւոր, թէ հարուստ:

Այլ աւա՛ղ որ ցարդ իսկ կան
շատ Վասակք ազգակործան,
կան ալ արի Վարդաններ
անզէն բայց ո՛չ անարժան:
քու քաղցր անուանց պաշտպաններ,
քու Հօրդ Հայկայ որդիներ:

Արդ հայրենեացդ իմ ոգի,
խընդրեմ քեզնէ որ քանի
դու նետահար թափառիս՝
մի զայն որ անհոգ նայի
հայու որդի համարիս,
քեզ բարեկամ զարկանիս:

Ո՛չ Հայկ հայոց որդւոց հայր,
Եւ Հայաստանդ հայու մայր.
արդ՝ թէ ծընօղքս են անմահ,
ապա մեծ է ո՞ւր այն այր:
որոյ հոգւոյն մէջ անուն
չի բազմիս դու իբր ՚ի քուն:

Թէ մոռնա՞մ ամպեր կուտակեր
 Եւ լոյս երեսդ են ծածկեր,
 Բայց մեր աչք դեռ կը զմայլի,
 որչափ և թանձր ալ է ստուեր՝
 գեղովդ, ոգի փարելի,
 սիրովդ, երկիր հայրենի:

Մէկ ժրպիտէդ բիւր շուշան
 չէ՞ որ դաշտք մեր ըզգեցան,
 եւ մէկ կաթիլ արցունքէդ՝
 անկան, բարձան, քանդեցան
 անթիւ անսուրբ ատրուշան
 անթիւ արիք Սասունեան:

Մօրդ Հայոց կաթն էր արիւն,
 որդիքդ, առիւծոց կորիւն.
 եւ ո՛չ երբեք զուտ ըստրուկ՝
 պատրեալք յոսկի կարմրագոյն,
 կամ ապիրատ բիրտ գեղջուկ,
 գոն՝ թէ ունին միշտ շիճուկ:

Միթէ հայկայ սերունդին
 ա՛յնչափ զատեր է հոգին՝
 մինչեւ չըզգան, չիմանան
 թէ քո վըշտացդ տեղին
 անդ է՝ ուր է Հայաստան,
 ուր փառքդ և շէնքդ են կործան:

Ո՛հ, Հայաստան, Հայաստան,
 դեռ աչքս ըզքեզ չտեսած
 որ օտարի տունն եմ հիւր,
 բայց թէ կանգուն թէ կործան՝
 հողդ ինձ քաղցր է, Հայաստան,
 օդդ ինձ սուրբ է, Հայաստան:

Զի ա՛րդ քաղաքք քո անկան...
 բայց կրօնքդ՝ ու անունդ կան մընան.
 և քանի խաչն է կանգուն՝
 մի՛ վհատիր, չե՛ս կործան,
 հոգւոյս հատորըդ Հայաստան,
 սիրոյս իմ մայրդ Հայաստան:

Յ. ՈՍԿԱՆ

Սբ. Թէոդորոս Ձեռագրատուն, Երզարան,

Ձեռ. թիւ 2904, 1887 թ., էջ 7-10: